ՍՎԵՐԴԼՈՎԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ

2023-2024 ուստարի

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ - ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

Մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ
Ա. Մագթաղյան

31.08.2023թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ծանոթություն 1ին դասարանցիների հետ, 1-ին և 12-րդ դասարանների աշակերտների շփում /ավագ և կրտսեր սերունդ/
2. Ընդունել 1-12-րդ դասարանների աշակերտներին:
3. Ստեղծել շփում ավագ և կրտսեր սերունդների միջև:
4. Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
5. Կատարել ամենօրյա հաճախումների հաշվառում:
6. Պարզել աշակերտների ամենօրյա ուշացման և բացակայությունների պատճառները:
7. Կազմել անապահով աշակերտների ցուցակ և ձեռնարկել միջոցառումներ այդ երեխաներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ:
8. Կազմել միակողմ և երկկողմ ծնողազուրկ երեխաների ցուցակ:

9. Կազմել դասղեկական ժամերի ժամանակացույց,սահմանել դրանց կատարողականի հսկողություն:
10. Կապ ստեղծել տարրական և միջին օղակների միջև:
11. Հաստատել դաստիարակչական պլանները :
12. Մանկավարժների մեջ տարածել մանկավարժական դաստիարակչական աշխատանքների արդյունավետ փորձը և խրախուսել հաջողակ դասղեկներին:
13. Կազմավորել ԱԽ և աջակցել դպրոցականների ինքնավարությանը ԱԽ-ի միջոցով:
14. Կազմավորել ԾԽ և կազմակերպել նրա աշխատանքը:
15. Կզմակերպել մրցույթներ,խաղեր,վիկտորինաներ:
16. Իրականացնել ազգային մշակույթի ժառանգության պահպանման և զարգացման ուղղությամբ տարաբնույթ միջոցառումներ:
17. Մշտապես կազմակերպել հայոց լեզվի անաղարտության պահպանմանն ուղղված միջոցառումներ:
18. Արժեվորել ազգային ավանդույթները, կարևորել և պահպանել պետական խորհրդանիշները դպրոցում:
19. Իրականացնել <<Մեր դպրոցը մեր քաղաքի մի մասն է>> սեմինարներ/զրուցել դպրոցի հիմնադրման, անվանակոչության մասին/,կապ պահպանել Ռ.Միրոյանի ընտանիքի հետ:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Համակարգված աշխատանքների իրականացում սովորողների վարքի,,վարվեցողության նորմերի և կանոնների ապահովման ուղղությամբ:
2. Սովորողների արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպում և ղեկավարում:Դասղեկների գործունեության ղեկավարում և հսկողություն:
3. Աշակերտների արտաքին տեսքի, դասարանների սանիտարական վիճակի, աշակերտների հաճախումների, վարքի և առաջադիմության վերահսկում:
4. Դպրոց-ընտանիք համագործակցության բարելավում:
5. Աշակերտ-ուսուցիչ կապի ամրապնդում:
6. Աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպում:
7. Հանդուրժողականության տարածում աշակերտների և ուսուցիչների շրջանում:
8. Սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցուցաբերելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների կազմակերպում:
9. ԱԽ-ի դերի և հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
10. Աշխատանք ուսուցիչների հետ դպրոցն ավելի աշակերտակենտրոն դարձնելու նպատակով:
11. Համագործակցություն անչափահասների գործերով զբաղվող իրավապահ մարմինների հետ:
12. Տարրական և միջին օղակների միջև կապի ամրապնդում:

ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին:
2. Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի Հայաստանի պատմամշակութային վայրեր:
3. Անցկացնել զրույցներ՝ բարոյագիտություն, վարվեցողություն, պահվածք:
4. ՈՒշադրություն դարձնել աշակերտների պահվածքին դասամիջոցներին:
5. Դաստիարակել և սերմանել հարգանք գրքի, դպրոցի գույքի նկատմամբ:
6. Անցկացնել զրույց <<Աշակերտ-ուսուցիչ փոխհարաբերությունների հոգեբանություն>>թեմայով:
7. ՈՒշադրության կենտրոնում պահել աշակերտների ճիշտ սեռական դաստիարակության հարցը/համագործակցել կենսաբանության ուսուցչի հետ:
8. Կազմակերպել և անցկացնել դպրոցի համար ավանդական տոները և միջոցառումները՝Գիտելիքի օր, ՀՀանկախութըան օր, ՈՒսուցչի օր, Իմ բնօրրան , Սպորտլանդիաներ, <<Ոչ Ձիահ-ին>> միջազգային օր,դպրոցի անվանակոչությանը նվիրված միջոցառում, <<Նվաճումների տոն>> առաջին դաս-ներում, Ամանորյա ցերեկույթ, ,,Սուրբ ծնունդ,,Բանակի օր, Քաղպաշտպանության օր, Կանանց միջազգային օր, Մայրության և գեղեցկության օր, Հաղթանակի օր, այցելություն հիշատակի վայրեր և այլն:

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կազմակերպել այցելություններ մշակութային օջախներ:
2. Բացահայտել շնորհալի աշակերտներին,նրանց ընդգրկել տարաբնույթ միջոցառումների մեջ :
3. Աշակերտների օգնությամբ ձևավորել դպրոցի միջանցքները, դասարանները:
4. Կազմակերպել հանդիպումներ գրողների հետ,այցեր գրողների տուն-թանգարաններ:
5. Պարբերաբար կազմակերպել երեխաների նկարների և ձեռքի աշխատանքների ցուցահանդեսներ, խրախուսել ստեղծարարությունը:
6. Տարաբնույթ միջոցառումների միջոցով աշակերտների մեջ սերմանել սեր դեպի բնությունը, պարբերաբար ընդգրկել նրանց բնապահպանական միջոցառումներում:

ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Պարբերաբար անցկացնել <<Արիության դասեր>>, զրույցներ հայրենասիրական թեմաներով:
2. Կազմակերպել էքսկուրսիաներ պատմական վայրեր, թանգարաններ, այցելել հուշահամալիրներ պատմական օրերին/սեպտ.21,հունվարի 28,ապրիլի 24,մայիսի 9,մայիսի 28/:
3. Մշտապես կարևորել ՀՀ պետական խորհրդանիշների արժեվորմանն ուղղված միջոցառումները, ապահովել հայրենասիրական գաղափարների գործածումը:
4. Կազմակերպել այցելություններ տարածքում տեղակայված զորամաս:

5. Կազմակերպել ինտելեկտուալ մրցույթներ ՆԶՊ և Հայոց պատմություն առարկաների համագործակցությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Աշակերտներին ակտիվ մասնակից դարձնել դպրոցական և քաղաքային շաբաթօրյակներին:
2. Սահմանել դասարանների ամենօրյա մաքրություն ,հերթապահությունների ցուցակ:
3. Անցկացնել զրույցներ դպրոցի միջանցքների, պատերի, ինչպես նաև դպրոցի բակի մաքրությունը պահպանելու նպատակով:
4. Կազմակերպել ծառատունկ և հոգ տանել դպրոցի կանաչ տարածքի նկատմամբ:
5. Սահմանել աշակերտների սանիտարական վիճակի, դասարանների մաքրության մշտական հսկողություն:
6. Մաքրություն պահպանելու նպատակով համագործակցել դպրոցի բուժքրոջ հետ: